ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2023 **թ**. **մարտի** 23-ին տեղի ունեցած թիվ 9 նիստի

ՀՀ, ք. Երևան 23.03.2023 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկությամբ ներկայացված օրակարգով և ժամանակացույցով 2023 թ. մարտի 23-ին տեղի ունեցավ ԵՊՀ գիտական խորհրդի թիվ 9 նիստը: Նիստին մասնակցեցին գիտական խորհրդի 80 անդամներից 76-ը (կից ներկայացվում է ցուցակը):

Նիստը նախագահում էր ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Մերի Հովհաննիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդին կից հանձնաժողովների կազմերի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան).

1.1. ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կազմի հաստատում,

1.2. ԵՊՀ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի կազմի հաստատում,

1.3. ԵՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի կազմի հաստատում,

1.4. ԵՊՀ գիտական խորհրդի էթիկայի հանձնաժողովի հաստատում:

2. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի ընտրության ընթացակարգը» հաստատելու և 2012 թ. մայիսի 31-ին հաստատված «Երևանի պետական համալսարանի ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգն» ուժը կորցրած ճանաչելու մասին (զեկ.՝ ԵՊՀ իրավական ծառայության պետ Ա. Ա. Թադևոսյան):

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին (զեկ.՝ ԵՊՀ իրավական ծառայության պետ Ա. Ա. Թադևոսյան):

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ուսումնական/ակադեմիական գծով պրոռեկտոր Է. Վ. Ասրիյան):

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ուսումնական/ակադեմիական գծով պրոռեկտոր Է. Վ. Ասրիյան):
6. ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին լիովին համապատասխանող «Բանբեր Երևանի համալսարանի. իրավագիտություն» (խմբ.՝ Գ. Դանիելյան), «Պետություն և իրավունք» (խմբ.՝ Գ. Ղազինյան) (զեկ.՝ ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կ. Գրիգորյան):
7. ԵՊՀ գրահրատարակչական խորհրդում քննարկված աշխատությունների հրատարակության երաշխավորում (ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կ. Գրիգորյան):
8. «ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման լրամշակված կարգի» հաստատում (զեկ.՝ ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյան):
9. «Նորարարությունները ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում» (15 ր.), (զեկ.՝ ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ Նվարդ Մելքոնյան):
10. Ընթացիկ հարցեր

ԵՊՀ նոր ձևավորված ԳԽ առաջին նիստի ժամանակ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, չխախտելով պարգևի արժանացած համալսարանականներին գնահատելու ու շնորհակալություն հայտնելու ավանդույթը, համալսարանում ծավալած գործունեության, մեծ վաստակի ու երիտասարդ մասնագետների պատրաստման գործում ունեցած նշանակալի ավանդի համար ԵՊՀ ոսկե մեդալով պարգևատրեց օպտիկայի ամբիոնի պրոֆեսոր Ռաֆիկ Հակոբյանին:

ԵՊՀ ռեկտորը շնորհավորեց նաև իրավագիտության ֆակուլտետի ուսանող Խաչիկ Զաքարյանին, որին պետության սահմանները պաշտպանելիս ցուցաբերած քաջարիության ու զինվորական բարձր պատրաստվածության համար Արցախի Հանրապետության նախագահը պարգևատրել է «Մարտական ծառայության» մեդալով: Այնուհետև Հ. Հովհաննիսյանն անդրադարձավ համալսարանի ընթացիկ աշխատանքներին, խոսեց խնդիրների ու նախատեսվող փոփոխությունների մասին: ԵՊՀ ռեկտորը ԳԽ անդամներին որպես առաջարկ ներկայացրեց պրոֆեսորի ու դոցենտի պաշտոնների համալրման համար անհրաժեշտ պահանջներ՝ փաստելով, որ դրանք դեռևս քննարկվելու ու լրամշակվելու են:

1.1 «**Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդին կից իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կազմի հաստատում**:

Հաջորդիվ՝ նիստի օրակարգի հաստատումից հետո, ԵՊՀ ռեկտորը ԳԽ հաստատմանը ներկայացրեց իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կազմը.

Ղազինյան Գագիկ Սերգեյի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան,
Ասրիյան Էլինա Վյաչեսլավի – ԵՊՀ ուսումնական գծով պրոռեկտոր,
Բարխուդարյան Ռաֆայել Հրայրի – ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր,
Հովհաննիսյան Միքայել Դավիթի – ԵՊՀ զարգացման և նորարարության գծով պրոռեկտոր,
Հովհաննիսյան Մերի Վազգենի – ԵՊՀ գիտական քարտուղար,
Թադևոսյան Արմեն Աղամի – ԵՊՀ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ,
Ներկարարյան Խաչատուր Վլադիմիրի – Ֆիզիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար,
Ավագյան Գոհար Սերգեյի – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ:

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

ստեղծել ԵՊՀ գիտական խորհրդին կից իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձնաժողով՝ վերոնշյալ կազմով, **և սահմանել հանձնաժողովի գործունեությունը գիտական խորհրդի սույն կազմի գործունեության ամբողջ ընթացքում**:

1.2. **ԵՊՀ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի կազմի հաստատում**:

ԵՊՀ ռեկտորը ներկայացրեց ԵՊՀ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

Վարդևանյան Պողոս Հովհաննեսի – ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ,
Հովհաննիսյան Մերի Վազգենի – ԵՊՀ գիտական քարտուղար,
Մելքոնյան Ռուբեն Հովհաննեսի – ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան,
Հակոբյան Ռաֆիկ Սերգեյի – ԵՊՀ օպտիկայի ամբիոնի պրոֆեսոր,
Մանուկյան Ժակ Սամվելի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ,
Մելքոնյան Նվարդ Արայիկի – ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ,

Մարգարյան Նարեկ Գագիկի – ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտ,
Աբաջյան Խաչիկ Նորայրի – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասպիրանտ, ՈԻԽ նախագահ:

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

ստեղծել ԵՊՀ գիտական խորհրդին կից մրցութային մշտական հանձնաժողով՝ վերոնշյալ կազմով, և սահմանել հանձնաժողովի գործունեությունը գիտական խորհրդի սույն կազմի գործունեության ամբողջ ընթացքում:

1.3. **ԵՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի կազմի հաստատում**:

ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացվեց ԵՊՀ որակի ապահովման մշտական հանձնաժողովը՝ հետևյալ կազմով.

Սահակյան Արթուր Արտուշի– ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան,
Բուդաղյան Արմեն Ստեփանի – ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի տնօրեն,
Ավանեսյան Հրանտ Միքայելի – ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ,
Մկրտիչյան Արթուր Երվանդի – ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան,
Հովհաննիսյան Անահիտ Մխիթարի – ԵՊՀ ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի կառավարման ամբիոնի վարիչ,
Խառատյան Լուսինե Զավենի – ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնի տնօրեն,
Փանոսյան Մերի Ստեփանոսի – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ, ՈԻԳԸ նախագահ:

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

ստեղծել ԵՊՀ գիտական խորհրդին կից որակի ապահովման մշտական հանձնաժողով՝ վերոնշյալ կազմով, և սահմանել հանձնաժողովի գործունեությունը գիտական խորհրդի սույն կազմի գործունեության ամբողջ ընթացքում:

1.4. **ԵՊՀ գիտական խորհրդի էթիկայի հանձնաժողովի հաստատում**:

ԵՊՀ ռեկտորը ներկայացրեց ԵՊՀ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

Շուքուրյան Սամվել Կիմի – ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի տնօրեն,
Հարությունյան Նազիկ Կարապետի – ԵՊՀ մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի տնօրեն,
Պետրոսյան Վահրամ Սամվելի – ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
Բաբաջանյան Աննա Կարենի – ԵՊՀ ռազմավարական պլանավորման կենտրոնի տնօրեն,
Հայկյանց Արմեն Մերուժանի – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ,
Նիգարյան Արթուր Արարատի– ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ուսանող,
Դանիելյան Վերգինե Արմենի – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանող:

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

ստեղծել ԵՊՀ գիտական խորհրդին կից էթիկայի մշտական հանձնաժողով՝ վերոնշյալ կազմով, և սահմանել հանձնաժողովի գործունեությունը գիտական խորհրդի սույն կազմի գործունեության ամբողջ ընթացքում:

2.««**Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի ընտրության ընթացակարգը» հաստատելու և** 2012 **թ. մայիսի** 31-**ին հաստատված «Երևանի պետական համալսարանի ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգն» ուժը կորցրած ճանաչելու մասին**:

Օրակարգային հաջորդ հարցի շրջանակում ԳԽ-ն քննարկեց ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի ընտրության ընթացակարգը» հաստատելու և 2016 թ. մայիսի 26-ին հաստատված «Երևանի պետական համալսարանի ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը:

Ըստ ընթացակարգի՝ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար կարող է ընտրվել այն անձը, որն ունի ստորաբաժանման ուղղությանը համապատասխանող գիտական աստիճան և կոչում: Բացի դրանից՝ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարն ընտրվում է ԵՊՀ գիտական խորհրդում փակ, գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամկետով: ԵՊՀ իրավական ծառայության ղեկավար Ա. Թադևոսյանը փաստեց, որ այդ դրույթները բխում են ԵՊՀ նոր խմբագրությամբ կանոնադրությունից: Այս հարցի վերաբերյալ հնչեցին բազմաթիվ կարծիքներ ու առաջարկներ, և ԳԽ-ն որոշեց հաստատել ընթացակարգը՝ խմբագրելով այն ու ներառելով հնչած որոշ առաջարկներ:

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 72, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4):

Որոշվեց.
հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի ընտրության ընթացակարգը» և ուժը կորցրած ճանաչել 2012 **թ. մայիսի** 31-**ին հաստատված «Երևանի պետական համալսարանի ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը»**:

3. «**Երևանի պետական համալսարանի պատվավոր կոչումների և պարգևների շնորհման կանոնակարգում» լրացում կատարելու մասին**:

Անցնելով օրակարգային հաջորդ հարցին՝ Ա.Թադևոսյանը զեկուցեց «ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» փոփոխություններ կատարելու մասին հարցը: Նա ներկայացրեց առաջարկվող փոփոխությունները, որոնց վերաբերյալ հնչեցին կարծիքներ ու առաջարկներ: Քննարկման արդյունքում որոշվեց դրանք համախմբելով ներառել կանոնակարգում և հաստատել: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հաստատել «Երևանի պետական համալսարանի պատվավոր կոչումների և պարգևների շնորհման կանոնակարգում» առաջարկվող լրացումը:

4. «**Երևանի պետական համալսարան» հիմնադրամի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության հաստատում**:

Հաջորդիվ ԵՊՀ ուսումնական/ակադեմիական գծով պրոռեկտոր Էլինա Ասրիյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի ու բովանդակության վերաբերյալ հարցերը: Ըստ տիկին Ասրիյանի՝ նախագծերի մշակման համար հիմք են հանդիսացել շրջանավարտների և ուսանողների հարցումների արդյունքները, միջազգային փորձի ուսումնասիրությունը, բենչմարքինգը և բոլոնյան մի շարք փաստաթղթեր: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 73, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը:

5.«**Երևանի պետական համալսարան» հիմնադրամի մագիստրոսի կրթական ծրագ-րի կառուցվածքի և բովանդակության հաստատում**:

Է. Ասրիյանի խոսքով նախագծերի հաստատումը հնարավորություն կտա ունենալու Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում գործող կրթական ծրագրերի հետ համադրելիություն, կամընտրականության սկզբունքի հիման վրա ուսանողակենտրոն ուսուցման կիրառման հնարավորություն: Նախագծերով առաջարկվում են ունիֆիկացված կրեդիտային ծավալ ունեցող դասընթացներ և մոդելացվածություն դրանց համար: Պրոռեկտորի հավաստմամբ նախագծերով կամընտրական դասընթացների քանակը գրեթե կրկնապատկվել է, ինչը հնարավորություն է տալու կազմակերպելու անհատականացված ուսուցում: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը:

6.**ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին լիովին համապատասխանող «Բանբեր Երևանի համալսարանի. իրավագիտություն» (խմբ.՝ Գ. Դանիելյան), «Պետություն և իրավունք» (խմբ.՝ Գ. Ղազինյան)**:

Այնուհետև ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կարեն Գրիգորյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ հրատարակչության առաջադրած չափորոշիչներին լիովին համապատասխանող «Պետություն և իրավունք» և «Բանբեր Երևանի համալսարանի. իրավագիտություն» հանդեսները հրատարակության երաշխավորելու մասին հարցը: Նրա խոսքով՝ հրատարակվող ամսագրերի համար սահմանվել են որոշակի չափորոշիչներ, որոնց համաձայն՝ դիտարկվում են ամսագրերը և ներկայացվում երաշխավորության: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 76, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հրատարակության երաշխավորել նշված հանդեսները:

7.**ԵՊՀ գրահրատարակչական խորհրդում քննարկված աշխատությունների հրատարակության երաշխավորում**:

Կ. Գրիգորյանը ներկայացրեց նաև ԵՊՀ գրահրատարակչական խորհրդում քննարկված աշխատությունները հրատարակության երաշխավորելու մասին հարցը: ԳԽ-ն հավանության արժանացրեց ներկայացրած հարցերը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 75, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1):

Որոշվեց.

հրատարակության երաշխավորել նշված աշխատությունները:

8.**«ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման լրամշակված կարգի» հաստատում**:

Օրակարգային հաջորդ հարցի շրջանակում ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Արմեն Բուդաղյանը ներկայացրեց «ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման լրամշակված կարգը» հաստատելու մասին հարցը՝ ներկայացնելով իրականացրած փոփոխությունները: ԵՊՀ ԳԽ-ն հաստատեց ներկայացված կարգը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 75, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1):

Որոշվեց.
հաստատել «Երևանի պետական համալսարանի կրթական ծրագրերի մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման լրամշակված կարգը»:

9.«**Նորարարությունները ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում**»:

Անցնելով օրակարգային վերջին հարցին՝ ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ Նվարդ Մելքոնյանը հանդես եկավ «Նորարությունները ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում» թեմայով զեկուցմամբ:

Գիտական խորհրդի նախագահ Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան